ՎԵՀԱՓԱՌ ՀՈՐԸ

ՍՐՏԻ ԽՈՍՔ ԻՄ, ՔՈ, ԻՄԿ ԱՎԵԼԻ ՃԻՇՏ՝ ԱՄԵՆՔԻՍ ԿՈՂՄԻՑ

Լո՛ւյս առավոտի,
Դու, որ նման ես հավիտենության...
Տո՛ւր ամենեցուն դու խաղաղության շնորհը վերին,
Հեղի՛ր ամենուր արդարությունդ որպես մանանա...

ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ

Դուք եկաք, երբ Հայոց աշխարհում կրկին գարուն էր, զեփյուռի մեղմ խաղից հեզիկ խոնարհվում էր ծաղկած ծիրանին... Եկաք ամենքի հետ՝ Լուսավորչանիստ գահից վերցնելու սգո ֆողը, ի լուր համայն հայության ավետելու այն անունը, որ ոսկյա տառերով պիտի գրվեր ազգիս պատմության անցյալի ու ներկայի փառահեղ էջերից ամենանորում: Եկաք, որ ետ դառնաք, քանզի Հայոց Սփյուռքում մի մեծ ընտանիք ունեիք, որի ամեն մի անդամն իր այգաբացն առանց Ձեզ չէր պատկերացնում:

Այո, Վեհափառ Տեր, դա ճիշտ երեք տարի առաջ էր: Սովորականի նման Դուք՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսդ, Մայր Տաճար մտաք՝ մասնակցելու երեկոյան ժամերգությանը: Դեռ ընտրությունները չէին սկսվել: Հանդարտ ու վեհ քայլվածքով առաջացաք դեպի ձախակողմյան դասը, և ամենքի հետ սկսեցիք աղոթել առ Բարձրյալը: Գուցե Ձեր շուրթերին, ժպիտի հետ մեկտեղ, թրթռում էր նաև նույն ցանկությունը, ինչն այդ օրերին համարվում էր համայն հայությանը: Հիմա դժվար է ասել: Չգիտեմ ինչու, երբ այդ օրը տեսա Ձեզ, ինձ թվաց, թե Դուք էլ, ինչպես շատ տարիներ առաջ լուսահոգի Վազգեն Ա Վեհափառը, եկել եք վերադառնալու պայմանով, բայց պիտի մնաք Սուրբ Էջմիածնում առանց պայմանի՝ հայոց ազգի հավատավոր զավակների նվիրական ցանկությանն ընդառաջ գնալով:

ՀԻՇՈ՞ՒՄ ԵՔ...

1995 թվականի ապրիլի 3-ին հայոց լույս հավատի հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարվեց Ազգային-Եկեղեցական սրբագումար ժողովը: Աշխարհասփյուռ հայության պատգամավորները հավաքվեցին վերանկախացյալ Հայաստանում՝ մեկ կամք ու մեկ հոգի դարձած ընտրելու առաքելահիմն և լուսավորչահաստատ գահի 131-րդ գահակալին:

Ազգային-Եկեղեցական ժողովն սկսվեց Մայր Տաճարում մատուցված Սուրբ և անմահ Պատարագով: Պատարագիչն ու քարոզխոսը ԱՄՆ-ի Արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանն էր: Հընթացս Սուրբ Պատարագի, տեղի ունեցավ աշխարհական պատգամավորների երդման հանդիսավոր արարողություն՝ կաթողիկոսական տեղապահ, Երուսաղեմի

Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոսի երդմնեցուցչությամբ, որից հետո տարբեր նախասիրությունների ու ցանկությունների տեր բոլոր պատգամավորներն ստացան Ս. Հաղորդություն: Հավարտ Սուրբ Պատարագի, երջանկահիշատակ Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի շիրմի մոտ կատարվեց հոգեհանգստյան կարգ:

Ժամը 11-ին Վեհարանում սկսվեց Ազգային-Եկեղեցական ժողովի պատգամավորների գրանցումը: Գրանցվեց 398 պատգամավոր:

Հետմիջօրեին, ժամը 14.30-ին, Վեհարանի հանդիսությունների սրահում տեղի ունեցավ ժողովի բացումը՝ Կոստանդնուպոլսի Պատրիարք Ամենապատիվ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Գազանճյանի աղոթքով:

Ժողովական ընթացիկ հարցերի լուծումից հետո, պետական ավագանու ուղեկցությամբ, ժողովասրահ մտան կաթողիկոսական տեղապահ Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը, Դուք՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Հայրապետդ, ՀՀ վսեմաշուք նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը:

Կաթողիկոսական տեղապահ Թորգոմ արքեպիսկոպոսն իր ողջույնի խոսքից հետո ձայնը տվեց ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին, ապա դիվանի քարտուղարությանը հանձնվեցին ԼՂՀ ղեկավարության շնորհավորագրերը:

Այնուհետև ժողովին Ձեր խոսքն ուղղեցիք Դուք՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսդ:

Հաջորդ օրը, ապրիլի 4-ի առավոտյան, սկսվեց երկրորդ նիստը: Տեղապահի զեկույցից հետո, պատգամավորները դիմեցին դեպի Մայր Տաճար, ուր գաղտնի քվեարկության ընթացքում, Իջման Սուրբ Սեղանի առջև մնալով քվեաթերթիկի ու իրենց խղճի հետ, համաձայն նախորդ օրվա տված երդման, պետք է ընտրեին Հայոց Առաքելահիմն գահի 131-րդ գահակալին:

Հետո ընտրության երկար ու ձիգ ժամերն էին: Ամեն ոք յուրովի էր ապրում այդ ժամերը...

Ի վերջո ավարտվեցին քվեարկությունը և քվեների հաշվումը: Ձայները բաշխվեցին հետևյալ կերպ.

ա) Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ - 186 ձայն,

բ) Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյան - 145 ձայն,

գ) Տ. Պարգև եպիսկոպոս Մարտիրոսյան - 61 ձայն:

Համաձայն կանոնակարգի, հետագա ընտրությունը պետք է ընթանար Ձեր և Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանի միջև: Սակայն Գարեգին Սրբազանը, դրսևորելով որդիական ակնածանք, դիմելով սրբագումար ժողովին, ասաց. «*Ինձ թվում է, այսօր պետք է ավարտենք այս ընտրությունները: Իմ կողմից ես ուզում եմ շնորհավորել Վեհափառ Հորը, որպես նորընտիր Հայրապետ, Ամենայն Հայոց Կաթողիկոս...*»:

ՀԵՏՈ՞...

Հետո, երբ բարակ-բարակ անձրև էր մաղում, իսկ գարնանային ցուրտ երեկոն փորձում էր Մայրավանքիս բակում անհամբերությամբ ճշմարտության ավետմանն սպասող հավատավորին հաղթել, ի լուր ամենքի, համայն աշխարհի ցնծագին,

բարձր ու հնչեղ ղողանջեցին Մայր Տաճարի զանգերը՝ ավետելով Հայոց Ընդհանրական Մայր Աթոռի նոր Գահակալիդ ընտրությունը: Իջման Սուրբ Սեղանի առջև հաստատեցիք հավատարմության Ձեր ուխտը Էջմիածնի նախամեծար և գերագահ Աթոռի նկատմամբ: Ապա բացվեցին Մայր Տաճարի դռները, և Դուք, որպես նորընտիր Հայրապետ, Ձեր հայրական օրհնությունը բաշխեցիք ժողովրդին: Ուրախության կանչերը դարձան համբույր ու գրկախառնություն, ողջագուրանքի ու շնորհավորանքի ջերմ խոսքեր, դարձան նաև գունագեղ լույսեր ու բոցեղեն ցոլքերով սահեցին երկինքն ի վար: Հրավառություն էր ու ցնծություն Հայոց աշխարհում:

Այդ օրերին լրագրողներից մեկն իր հոդվածում գրեց, թե նույն պահին, երբ ղողանջեցին զանգերը, Մայր Տաճարի գմբեթն ի վար մի լույս իջավ: Ձերդ Սրբություն, մի զարմացեք: Եթե այն նույնիսկ իրականություն էլ չէր, ապա հենց գուցե ազգիս վեհաթռիչ ցանկությունն էր, որ այդ լրագրողի երևակայության շնորհիվ իրականությամբ էր զգեստավորվել: Չէ՞ որ համայն հայոց անմեկնելի երազանքն էր՝ Լուսավորչահաստատ Աթոռի հաջորդ գահակալին տեսնել ճիշտ այդպիսին. շնորհաշատ, Աստվածահաճ և ազգանվեր...

Տակավին չէր իջել ցնծության առաջին ալիքը, երբ նորընտիր Կաթողիկոսիդ որդիական իր խոնարհումը բերեց ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը:

Ապրիլի 5-ի առավոտյան չորրորդ և վերջին նիստն արդեն նախագահում էիք Դուք՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետդ Ամենայն Հայոց:

ՄԻ ՆՈՐ ՈՒ ԿՐԿՆԱԿԻ ԾԱՂԿԱԶԱՐԴ

1995 թվականի ապրիլի 9: Ծաղկազարդի այս օրը կրկնակի ուրախություն էր, քանզի Ծաղկազարդով Հայաստանյայց Եկեղեցին ծաղկազարդվեց: Սուրբ Էջմիածնի զանգերը, միաձուլված ժողովրդի սրտի ձայնին, ավետում էին Նոր Հայրապետիդ մուտքը Մայր Տաճար: Նորընտիր Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսդ, առընթերակայությամբ Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի Սրբազան Պատրիարքների, ամպհովանու ներքո, առաջնորդում էիք Ձեր հավատավոր ժողովրդին դեպի Նոր Երուսաղեմ՝ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճար, ուր պիտի հռչակվեիք եպիսկոպոսապետ:

Հընթացս Սուրբ և անմահ Պատարագի, ի լուր ամենքի, ընթերցեցիք Ձեր ուխտագիրը, որից հետո Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու 12 եպիսկոպոսներ իրենց ձեռքը դրեցին ընտրյալիդ գլխին և աղոթքով ու մաղթանքով կոչեցին Ձեզ Առաքելական Աթոռի անարատ իշխանության: Ապա, որպես Ամենայն Հայոց Հայրապետ, անդրանիկ պատգամը տվեցիք Ձեր հավատավոր հոտին:

Սուրբ Պատարագին և գահակալության արարողությանը ներկա էին ՀՀ վսեմաշուք նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանն իր ավագանիով, ներկա էին նաև քույր Եկեղեցիների Հայրապետներն ու ներկայացուցիչները, մեծաթիվ հյուրեր ողջ աշխարհից:

ԻՍԿ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԿՐԿԻՆ ԳԱՐՈՒՆ Է...

Ամենասիրելի Վեհափառ Հայոց, ճիշտ երեք տարի է Ձեզ բաժանում պատմություն դարձած այս ժամանակից: Սակայն անցյալը երբեք, Ձեր իսկ բառերով ասած, անցած չէ: Նրա մեջ ներկան է, նաև՝ ապագան, եթե փոքր-ինչ ուշադիր լինենք: Այսօր Դուք իրավամբ կարող եք շիտակ ու հստակ հայացքով նայել հավատացյալ հայորդուն: Հիմա ես՝ այս տողերիս նվաստ ու տկար հեղինակը, չեմ պատրաստվում մեկ առ մեկ թվարկել երեք տարում Ձեր այցածը: Դրա անհրաժեշտությունը չկա, քանզի ամեն ոք տեսնում է այն: Անկարող եմ նաև գնահատանքի խոսք ասել, որովհետև մեծերը դրա անհրաժեշտությունը չունեն: Նրանց գնահատում են ժամանակն ու պատմությունը:

Բայց այս մեկը հաստատ ինձ կարելի է: Ամենայն Հայոց Հայրապետ, այս երեք տարվա ընթացքում Դուք հասցրեցիք մոտիկից ճանաչել Ձեր ժողովրդին, տարբեր թեմեր՝ Շիրակ, Գուգարք, Արցախ, Վիրք, Օդեսա, Մոսկվա, Լիբանան, Ռումինիա, ԱՄՆ, Անգլիա, Ֆրանսիա, Կանադա, Եգիպտոս, Գերմանիա, Իտալիա և այլուր այցելելով, եղաք նրա հետ, կիսեցիք նրա հոգսն ու ցավը, ուրախության համատեղ պահեր ապրեցիք, բազմաթիվ պաշտոնական այցելությունների ընթացքում առաջնային խնդիր համարեցիք Հայոց հինավուրց հողում հանուն հավերժության մաքառող ազգիդ նվիրական երազանքը, Ձեր հայրենանվեր ու ազգապահպան գործունեությամբ կարողացաք սիրով տրոփող սրտեր նվաճել, Ձեր հայրական պատգամին, խրատ-խորհուրդներին անհամբերությամբ սպասող հավատավորներ շահել, աշխարհի բոլոր ծագերում Ձեզնով հպարտացող, Ձեզ արհշատություն մաղթող հայորդիներ գտնել:

Հիմա իմ երկրում դարձյալ գարուն է: Այս երեք տարիների ընթացքում Դուք նույնպես ունեցաք Ձեր հոգու օվկիանոսի ալեբախումները: Դրանք առավել էին, նման Ձեր անհանգիստ, միշտ պրպտող, սակայն բարին արարելիս, բարու հետ դեմ-հանդիման ելնելիս մանկան պես ուրախացող բնավորությանը: Հիմա Դուք էլ Ձեր յուրահատուկ ու ներանձնական հաշվետվությունն եք թերևս պատրաստել: Ոչ, անշուշտ, իմ նմաններիս, այլ Ձեր ու Տիրոջ համար: Բայց գուցե ավելի շուտ միմիայն Ձեզ համար: Հասկանում եմ, անելիքները շատ են, ժամանակը՝ սահմանավոր: Բայց չէ՞ որ Դուք մտքի թռիչքը երբեք չեք սանձում ժամանակի պարանով: Հետևաբար, Ձեզ համար ժամանակը անժամանակ է, անհնարինը՝ հնարավոր, չարը՝ պարտվող, իսկ բարության երկնակամարում միշտ փայլատակում է երջանկության ու խաղաղաբեր արեգակը:

Թող հենց այդ արեգակն էլ լինի Ձեր հարատև ուղեկիցը, Վեհափառ Հայոց, որպեսզի լինեք Ձեր հոտը դեպի ճշմարտության ու անմահության առաջնորդող արժանի հովիվ, որպեսզի դեռ երկար տարիներ Ձեր ներկայությամբ գարունը գա Հայոց աշխարհ ու Ձեր ազգանվեր գործունեության շնորհիվ չհեռանա այդ հինավուրց հողից, որպեսզի Նոյի շունչը պարագրող ալեհեր լեռան հովանու տակ լույս ճառագի Հայոց առաքելահաստատ Աթոռից՝ Սուրբ Էջմիածնից:

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ